



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՐԵՎԵԼԵԱՆ ՈՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ
 ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ՀԱՄԱՔ**

Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանի Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու երիտասարդաց յանձնախումբին կազմակերպութեամբ 24 Մարտ, 2007ին տեղի ունեցաւ միօրեայ համագումար, հովանաւորութեամբ Հայ Առաքելական Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի գոյգ առաջնորդներուն՝ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի եւ Գերշ. Տ. Յովնան Ս. Արք. Տերտերեանի, Ղրպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Տ. Սերաբիոն Եպիսկոպոսի եւ Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ Գերշ. Տ. Եւոճին Զափլան Արքեպիսկոպոսի:

Հաւաքը սկսաւ Հայ Եկեղեցւոյ շարականներով եւ աղօթներով, առաջնորդութեամբ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան Վարիչներէն Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեանի: Նշենք, որ Հայր Սուրբը կը ներկայացներ Առաջնորդ Սրբազանը, որ այդ օրերուն Անթիլիաս կը գտնուէր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Թեմակալ Առաջնորդներու եւ Ազգային Իշխանութեանց ժողովներուն մասնակցելու համար: Արարողութենէն ետք Ղրպտի Եկեղեցւոյ քահանաներէն Տեր Էնթընին բարի գալուստ մաղթեց բոլոր ներկաներուն եւ աղօթեց Աստուծոյ, որ օրը ըլլայ բեղուն եւ արդիւնալից:

Ապա, Ղրպտի Եկեղեցւոյ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սերաբիոն Եպիսկոպոս խօսեցաւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու (Հայ, Ղրպտի, Ասորի, Հնդկ Մալապար եւ Եթովպիա) պատմութեան եւ միջ-եկեղեցական աշխատանքներուն մասին:

Երեք Եկեղեցիներու ներկայացուցիչները՝ Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան եւ ղրպտի եւ ասորի ներկայացուցիչ քահանաները՝ Տեր Տեյվիտ եւ Տեր Ճոն, դասախօսեցին իւրաքանչիւր Եկեղեցիներու պահեցողութեան եւ Աւագ Շաբթուան ընթացքին կատարուող Եկեղեցական արարողութեանց մասին: Կեսօրին, մասնակցողները միասին ճաշեցին, հիւրասիրութեամբ Ս. Կոյս Մարիամ Ղրպտի Եկեղեցւոյ, որմէ ետք տեղի ունեցաւ Եկեղեցական արարողութիւն եւ աղօթք քահանային առաջնորդութեամբ Ղրպտի քահանայ հայրերու, ապա՝ հարց-պատասխանի պահ մը, ուր երիտասարդներ իրենց մտահոգութիւնները յայտնեցին թէ ինչո՞ւ ներկայ երիտասարդութիւնը Եկեղեցի չի յաճախեր:

Մտահոգութիւններն էին՝

1. Ընտանիքները իրենց զաւակներուն չեն սորվեցներ Եկեղեցի յաճախել:
2. Պատարագը կը կատարուի երիտասարդութեան համար ոչ հասկնալի լեզուով:
3. Ուսուցման կոր ձեւեր՝ խաղերու, ընկերային հաւաքներու միջոցաւ:

4. Ներկայ բազմազբաղ եւ նիւթական աշխարհն ու մտածելակերպի ազդեցութիւնը:

Առաջարկներ

1. Նոր սերունդին համար Պատարագը կատարել հասկնալի լեզուով:
2. Ս. Պատարագի բացատրութիւն:
3. Ընկերային հաւաքներ կազմակերպել եւ այլազան ձեւերով Ս. Գրքի պատգամը փոխանցել:
4. Հրաւիրել հիւր դասախօսներ, որոնք խօսին երիտասարդութիւնը յուզող (ընկերային եւ այլ) հարցերու մասին:
5. Պարզութիւն, եւ եկեղեցւոյ երաժշտութիւնը կատարել երաժշտական այլ գործիքներով:

Հարց-պատասխանի ակարտին, ներկաները դարձեալ համախմուեցան եկեղեցի, ուր տեղի ունեցաւ աղօթք Ասորի եկեղեցւոյ Տէր ճոն քահանային առաջնորդութեամբ:

Հաւաքը առիթ եղաւ երիտասարդաց Միութիւններու ներկայացուցիչներուն, որ բաժնեկից ըլլան հասարակաց մտահոգութիւններու:

ORIENTAL ORTHODOX CHURCHES YOUTH GATHERING

On Saturday, March 24th 2007, a spiritual gathering and day of prayer for Oriental Orthodox youth group members took place, under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, H.G. Bishop Serapion of the Coptic Orthodox Church, and H.E. Mor Clemis Eugene Kaplan of the Syriac Orthodox Church. The event was organized by the Oriental Orthodox Churches Youth Committee and hosted by Holy Virgin Coptic Orthodox Church.

The gathering began with Armenian morning service led by Prelacy Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Muron Aznikian, representing Archbishop Mardirossian who was attending a clergy conference at the Catholicosate in Antelias. Welcoming remarks were then made by Father Antony of the Coptic Church.

Bishop Serapion in his lecture gave a brief history of the Oriental Orthodox Churches and spoke about collaboration and cooperation among the churches.

Representatives from the three churches then explained the traditions and services of their respective churches during Lent and Holy Week. Following lunch, which was prepared by the ladies association of the host church, Coptic service took place conducted by Fr. David and Fr. Antony. In the discussion session that followed, participants were given the opportunity to voice their concerns about issues such as the lack of youth participation in the church and in turn received suggestions and guidance from the reverend fathers.

The gathering concluded with Syriac evening services led by Fr. John.

info@westernprelacy.org, Visit our Website www.westernprelacy.org Copyright . 2007 All rights reserved.